



« 29 » 04 2016թ.  
Ե-33

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՊԱՐՈՆ Լ.ՄԿՐՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մկրտչյան

ՀՀ ԿԳ Նախարարությունը տարածել է հայտարարություն առ այն, որ նախարարությանը կից ձևավորվում է հասարակական խորհուրդ, որի կազմում ընդգրկվում են հասարակական կազմակերպություններ, որոնց գործունեության բնույթը համընկնում է նախարարության գործունեության հիմնական ուղղությունների հետ, միաժամանակ համապատասխան ոլորտում ունեն առնվազն 2 տարվա մասնագիտական փորձառություն:

Ինչպես գիտեք, դեռևս 2009 թ. Նախագահին կից ձևավորվել է Հանրային խորհուրդ, որի կազմում գործում են 12 ոլորտային հանձնաժողովներ և դրանց կից ենթահանձնաժողովներ: Գործում է նաև Գիտության, կրթության, սպորտի և մշակույթի հանձնաժողով, որի կազմում ձևավորվել է ավելի քան 240 անդամ ունեցող (ուսուցիչներ, դպրոցների, քոլեջների տնօրեններ, փոխտնօրեններ, անվանի պրոֆեսորներ, դասախոսներ, ԲՈՒՀ-երի ռեկտորներ և այլք) «Գիտություն և կրթություն» ենթահանձնաժողովը, որի նախագահն է տ.գ.թ., դոցենտ Կարինե Թումանյանը:

Կ. Թումանյանը Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարանի «Հարտարագիտական գրաֆիկա» ամբիոնի վարիչն է, ունի 40 տարվա գիտամանկավարժական աշխատանքային փորձ:

Առաջարկում ենք Կարինե Թումանյանին ընդգրկել ՀՀ ԿԳ նախարարությանը կից ձևավորվող հասարակական խորհրդի կազմում, քանի որ նա վերջին 7 տարիների ընթացքում մեծածավալ աշխատանք է կատարել ոլորտի խնդիրները վեր հանելու և որոշակի լուծումներ առաջադրելու ուղղությամբ:

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Վ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

